

ԽԱՐՉԵՐԿ

ՅԻՐԱՆՈՒԹՅԱՆ
ՆՈՒՄՅՈՒՐՈՒՄ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԵԱՐՏԻ 26 -ին. Թիֆլիս. №13



—Ատրպետը, Ատրպետը ինչ է--ուրիշ է, ճիշտ է նա շատ բան գիտէ Պարսկաստանի, Տաճկաստանի եւ Կովկասի մասին. սակայն նա այս բանը չգիտէ, թէ ինչպէս կարելի է ուրիշ նիւթերը սեփականացնել եւ աղբաբոսով գրող հոշակելու... հայտնի չէ Գո. շնորք չունէ էլ նա ինչ մարդ է. իսկ այդ բանը ես գիտեմ...

Л.Т.С.БЫХОВА

Շ Ա Ր Ա Ի Ն Ա Կ Ի Ռ Ի Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ն Գ Ր Ա Ի Թ Ի Ն

1911 թ.

«ԽԱԹԱՐԱԿԱՆ»-Ի
Բ Ա Ժ Ն Ե Գ Ր Ե Ն Է

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ
Ամիսը	— 50
Թիֆլիսում տարեկան	4 » —

VI
Տարի

ՄԱԹԱԿԱՆ

VI
Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍԼՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծա-
ւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրամբօք քերք բոլոր ընթանիքների համար

«ԽԱԹԱՐԱԿԱՆ» շաբաթին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հեռ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:
Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas edaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակող՝ Ա.Ս. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱՐԱԿԱՆ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐԶԱՆԴԱԿ» օրաթիւրթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրելու
ցանկացողին 75% զեղծ

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք
գ լ ի թ վ ա յ Ը :

«ԽԱԹԱՐԱԿԱՆ»-Ի ՕՐԱՑՈՅՑ

1911 ՄԱՐՏ 31 օր

Տոն ար. Գրիգոր Լուսա-
ւորչի վերամբ. մեծերու:

26

Շնորհաւորում ենք Գրի-
գորներին անուանափոշու-
թիւնները:

Суббота **ՉԱՐԵԹ** ԾՅԾԾԾԾ
Լուսնի 10

27 (կիր.) Թիֆլ. օգտակար գիտել. տարածող ընկ.-ը, ինչպէս երևում է չլոյս տեսած հաշիւներէն, 99 տեսակ գիտելիքներ է տարածել ժողովրդի մէջ:

28 (բ. 2.) «Երբանի» աշխատակից պ. Գաշ-բազը օրացոյցիս խմբագրի կարգադրութեամբ ամառս արտուում է Արասթուման:

29 (գ. 2.) Կաթողիկոսական թեկնածու է առաջարկւած աշխարհական Մեղաւորեանը. Սօխ-տէն խոստացել է ժամանակաւորապէս միլիոն-քը բան տալ:

30 (դ. 2.) Շուտով լոյս կբտեսնի մի լիակատար ցուցակ հայերէն այն բազմաթիւ գիտա-կան և գեղարւեստական մեծահատոր գրքերի, որոնք լոյս են տեսել 1910 թ.ի 2-րդ կիսամեա-կում: Արաթոշկան արդէն սպւում է:

31 (ե. 2.) Եւրաթ օրւայ տօնի տոթիւ պ. Գրիգորի մօտ մեծ հացկերոյթ եղաւ: Նա այդ-տեղ յայտնեց, որ սուկորները մահից յետոյ նւի-րելու է ներսիսեան դպրոցին:

Յիշատակարան

Գիտնականները հաստատում են, որ մարդ-կային ցեղը առաջ է եկել մարդուց:
Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ
Փարիմուզ

Մրտի ցաւօք յայտնում ենք, որ Շուլաւէրում անժամանակ վախ-ճանւել է «Խաթարալա»-յի աշխատակից

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՈՒԹԵԱՆԸ

(ՅՈՎ. — ՄԱՐ.)

Ի Ե Ր Ի Լ Ո Ւ Ս

Հափ...ը...ցան:
Հա...փը...ը...ցան:
Խէր, խէր, Ամենակալ, Գուն խէր
ու աշողութիւն ու ասկիւն էլ պէյծա-
ւութիւն տաւ. ամէն:
Բարի լուս, բարի օր իմ աչքի լիս
խաթարալիստներ, իմ ազիզ կարթա-
ցողներ, վճնց իք, լաւ իք. վճնց ին
ձեր գուրծիրը, բարեգմների, ճանաչ-
ների հալն ու ափայլթը, խասիաթիւ
ու... հոպոպնիրը: Խէլթի վրայ վճնց
իք, խօ խալաթ էք, գէթաղա խալ-
աթ կացէք, թէ չէ լաւ չէ, շատ վուր
խիլթին զոռ տաք ի՞նչ պիտի դուսգայ,
ան ինչ կանաք մոզոնի, գանա չիմ
գիղի՝ մէ սամովար էլա կանաք շինի՞.
բան չունի՞ք, լաւ կացէք ձեր հոքուն
մեռնիմ, լաւ ապրեցէք ու համ ձիգ
համա, համ ասկի համա, համ տու-
տուցներու ու խիլօքներու համա ու
համ էլ ինձ համա ձիր ազօթքներում
իշեցէք, ասեցէք, վուր ողորմած կե-
նայ Գասպարի հոքին... վայ, մեղայ
Աստճու, եանդիլ չէկայ, ասեցէք վուր...

ապրած կենայ Գասպարի հոքին:
Իժում լօթիք շան, թէ միւր կողմիցն
էլ կու հարցնիք, կանամ շուղաբ տայ-
փառք Աստճու մինք էլ լաւ ինք, մի-
րունք էլ լաւ ին, ձերունքն էլ լաւ
ըլին, գուրծներս էլ աշողակ է, մուրճ-
ներս էլ, համա մէ քիչ բան է պակաս
— շատ չէ քիչ է, խսկի դրա համա
չափի էլ խօսել, համա խօսք էկաւ ու
ասի, դուք էլ մի մինձ բան չգիղենաք
գէթաղալ, ան փուլ չկարծէք ու
էքուցեթ մեշոկներով չըղկէք, դուք
խօ գիղիք միւր խասիաթը. էտ չէ մի-
գէզը, էս սնաթիս միգ ինչ է պակաս
... խիլք. խիլքը վուր շատ ունենայինք
գիղիս թէ լաւ գնով կու ծախւէր, հա-
ւատա դուրթ իմ ասում, լօբու տօլ
մուշտարի կունենար:
Հիմի դուք էլ կասիք թէ էս միւր
Գասպարը վուրդի էր կորի վուր էս
ամիս, ամիսուկէս ձէն ծպտուն չհա-
նեց ու մէ բարովագիր էլա չուղարկեց:
Մանդիսխան էտինց էլ է ըլում.
Մասիաթի բան է.
Մաշ:
Իս ձիգ հարցնում իմ թէ դուք ի՞նչ



ՄԻ ԵՐԵՍ ԻՄ ՕՐԱԳՐԻՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գուցէ յայտնի է ընթերցող հասարակութեանը, որ ահա երրորդ շաբաթն է ինչ քննութիւն է կատարուում Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութեան մէջ և թէ երևան են հանուած անվերջ գողութիւններ ու թաւաններ:

Օգուտ քաղելով սուրբից, ես անհրաժեշտ համարեցի «Սաթարալայի» յարգելի ընթերցողներին ծանօթացնել իմ օրագրի մի երեսի հետ, յուսալով, որ այս ղէպըն էլ կարող կըլինի որպէս մի նիւթ ծառայել քննութեան աղող ընթացքին և իր վերայ կըղարձնի քննիչներ ռազարութիւնը, նա մանաւանդ, որ նմանօրինակ ղէպերը շատ սովորական են մեր քաղաքային վարչութեան մէջ:

1901 թւականի մարտի 15-ին քաղաքային սյգու պահապան Սարգիս Յարութիւնովը (սաղօփելի Սէրգէն) գնեց նոյն այգու համար 2 ցախաւել. սրանց արժէքը քաղաքային վարչութիւնից ստանալու ժամանակ, տեղի ունեցաւ հետեւեալ պրօցէսը:

1901 թւականի մարտի 15-ին առաւօտեան ժամը 10-ին սաղօփելի Սարգիսը ներկայանալով քաղաքային վարչութեան ատեանը, յայտնեց, որ քաղաքային այգին աւելու համար հարկաւոր է 2 ցախաւել:

Ուպրաւան հարցը քննելու համար նիստի հրաւիրեց և երկար ու բարակ քննութիւնից յետոյ սրոշեց գնել խնդրած 2 ցախաւելը: Յանձնարարեց նոյն Սարգիս Յարութիւնովին գնալ բազար գնել և ապա վարչութեանը գրաւոր կերպով զիմել և խնդրել նրանց արժէքը:

Սաղօփելի Սէրգէն ժամը 12-ին բազար իջաւ և թուրք Բեալըալա Մուստաֆա Ալապկեր-օղլու որդի Ազիզից երկու ցախաւել գնեց 30 կոպէկի և հետն առնելով խեղճ թուրքին ներկայացաւ ատեանը փողն ստանալու և ըստ պատկանելուն յանձնելու համար:

Ատեանին ներկայացնելով ցախաւելներին ու թուրքին, Ս. Յարութիւնովը խնդրեց վճարել 30 կոպէկ: Ատեանը իսկոյն յանձնարարեց կանցելարիական ծառայող պ. Մ-ին խնդիր գրել, վարչութեան գանձարանից փողը ստանալու համար:

Թուրքը և ցախաւելները նորից բերեցին ատեան և պ. Մ-ն մանրամասն հարցնելով թուրքի անունը, ազգանունը, բնակութեան վայրը, տարիքը, զաւանանքը, կոչումն ու պարապմունքը գրեց խնդիրն ու առաջարկեց ստորագրել:

Թուրքի անգրագիտութեան համար հրաւիրեց մի հայ Օհան Մացակով, որը և ստորագրեց խնդրագիրը:

Սարգիս Յարութիւնովը թուրքի հետ միասին խնդրագիրը ներկայացրին վարչութեան անգամ Մ. բէգին, որը կախաւած ցուցակներից մէկը գննելուց յետոյ յայտնեց,

ասում ին—խօսում, ու վերջն էլ քրթներիցը, ասկի քթիցը հանում ին:

Իս գուզէի վուր տարեկան մէ քսան քսանուհինգ միլիօն ասկի վրէն ծախսեմ բաս ինչ գիղիք:

Գնացի միր Գէվուրք Չիլինգարովին էլ ասի, ասի՝

—Գէվուրք ջան, ասի, Մոսկով չիս գնում ասի:

—Չէ, կօսէ, Մոսկովի ապրանք լայիղ չիմ անում, կօսէ, իս մէ գլուխ գագրանիցա՝ Մանչկատար, Լոնդոն Պարիժէ ապրանքներ իմ սողացնում, կօսէ:

—Է վուր դուն չիս գնում, իս վուր գնամ իօմ չիս նեղանայ, ասի:

—Գնայ, կօսէ, համա շատ ապրանք չբերիս, չունքի էտղանցի սպրանքը կօսէ, շատ էլ բափա չունէ, կօսէ:


Համա էլի հաջաթ չկայ, կօսէ, վուր վուչինչ չի էլի տարեկան մէ հարիր միլիօնի ապրանք, վուր սաղցնիս, մնամ, քառասուն իցուն միլիօն դադում կու ստանաս, կօսէ: Էս վուր իմացայ, էնչախնէթ խիլքիս նստեց, լաւ է ասի ախպէր. էլ ինչ իմ սպասում ասի, վիկացայ էնչախնէթ. տանն էլ բան չասի, չունքի Բագու գնալիս, տանեցոցս մէ անգամ մնաք բարով էի ասի, պրօշտի էի արի, էտ էլ հերիք էր, վիկացայ ու թուշ գնացի Մոսկով:

(Էլի կուլի)

Կասապուր Կարասուզով



Գ Ր Չ Ի Կ Ա Տ Ա Կ Ն Ե Ր



ն էր օ...որդ. Ա...-ին

Երբ ոչ մի ապրանք դուքանի միջին, Виставка լինի երեսուն տարի, Գոյնը կըփոխի, արեւի տակին, Թէկուզ նա լինի ազնիւ տեսակի:

Արդ՝ եթէ մի օր տիրոջ բաղդեցը, Մի հարբած մ'արդ մուշտարի լինի ինչ ես կարծում.— խելացի տէրը նա՞ր պիտի ծախի՞, թէ՞ զեղ պիտի անի... Մո՞ն—Սի



իք անում իի վուր գուրձներդ էրեսի վրայ թողած դուս էք գնում անիցը ու սէյիր էք անում:

Չէ, չէ՞: Համա թէ գուզիք, իս ձիգ կօսիմ. ինչի, չպիտիմ ասի ախպէր, իս ում-նիցն իմ պակաս:

Տեսայ վուր քաղցրիք օրօրոցեմէն էլածը մինչկլի գերիզմի դուռը հասածները՝ մէ գլուխ Մոսկով, Պիարէբուխ ին գնում. իս էլ ասի. արի մէ ջէր էլ իս գաբէգուայ անիմ Մոսկով Մակարիա գնամ, ասի, էգբբայ էնդի էյա մէ բան դառնամ. իօմ գիլիք, աղաք՝ գուզէի Մանթաշովի օրմօէքը առնի. իժուս կօսիմ թէ ինչ էլաւ, օրմօէքը չարայ, էս միր Մանթաշովն էլ, Աստուծ կինք տայ, լաւ մարթ է, համա ինչ վուր չի՝ առուարական մարթ է, իրա օքտի համա էր մի գլուխ խօսում. ա՞՞ գուզէր վուր իր խուր օրմօէքը վրիս սողացնիր. գնացի իս Բաքու, հարցրի շատ սղեբանց, իմ ճանանչներին, ասին, օրմօէքը խուրն է, կօսէ, ու էնդանց մինձ-մինձ ժողովկաններով ին նաւթ դուս քաշում, կօսէ, ասի՝ էրկու արշին խոր կուլի՞, ասի, ասին էրկուհարիր օխտանասուն սաժէն կուլի, կօսէ. արբա էլ գիժ էի, թէ խիլքս պանրուհուցի ճիգն էի կերի, էտ թաւուր հորի մէջ վուր փափախս դիվիվիր էր նընդի էտ էլ վունց պիտինը գիվիր գնայինք ու էնկանց հանէինք ասի, էտենց դալթաբանդ բաների հետ իս դաւի չունիմ, ասի. փափախս ճոն Ակոփովի մօղիցն իմ առի ու կու թողնի՞մ ասի, վուր օրմօի մէջ նընգնի, ինչ է՝ թէ իս միլիօնչիկ պտիմ ըլի ասի. դաբուլ չելայ, Մանթաշովի օրմօէքը չարայ. սա էլ իմանում է, վուր իս գնացել իմ Մոսկով Մակարիա, էնդի գուրձ սկսելու, էնչախնէթ վագում է, Ռուսէթ, գալիս է ինձ փնդրելու, իս էլ չիմ էրևում, ճիղը չիմ տեսնում, դարդլամիչ է ըլում ու գնում է Պետրիբուխ հիւանդանում է. Աստուծ լաւութիւն տայ, համա նրա օրմօէքը իմ փանդի բանիր չէին:


Է՞ ինքն էլ ինչի պիտի նեղանար, վուր օրմօէքը լաւ բան ըլէր, իօ ինքն էլ չէր ուզի ծախի էլի, էտինց չի՞ ախպրտինք ջան:

Մոսկովում վունց վուր ասի, իս գուզէի մէ լաւ գուրձի կաչի, էնթաւուր մէ գուրձի՞, վուր համ ինձ՝ համ իմ ուճուլ-բուճուլներու՞, համ ձիգ՝ համ ձիր ուճուլ բուճուլներուն. մինչկլի աշխրքիս վիրջը հերիք անիր. իս փիքը էի անում, վուր էնթաւուր բան գլխիմ, էնթաւուր գուրձի վրայ կաղնիմ, վուր ասկի համա էլ վունչ մի հաուց բարեգուրձի չգիմինք, չունքի խիղճերը մէ բան վուր տալիս ին ան փիքը ին անում տալ՝ ջէր տարիներով

ՅԵՐԵՎԱՆ
ՆՈՅԵՄԲԵՐ 1920



—Տէք մեզ իրաւունքներ, մենք պահանջում ենք...
 —Ազատ սիրոյ իրաւ...ութեանք... ստացէք, ի սէր Աստծոյ, զրանից մարդկանց փաստ չի կանսի:



ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՇՈՒՐՁԸ

այսօր ինքը իրաւունք ունի խնդիրներ չնդունել, որովհետեւ հերթը ուրիշինն է:

Պնդրատուները ներկայացան օրապահ անդամին, որը խնդրագիրը գտնելով օրինաւոր, գինը բաւարար, մակագրեց՝ «ВЪ УПРАВУ»:

Այս խնդիրը ներկայացուց օրապահ գրագիրն. հարկաւոր գիրքը անցկացնելու համար: Վերջինս կատարելով պահանջելիք ձեւերը պարտաւոր խնդիրը ներկայացրեց զործավար Գ. Գ-ին, որը ստորագրելով յիշեալ խնդրագրի ստանալու մասին, արձակեց գրագիրին և թուղթը յանձնեց ընդհատար Յ. Գ.-ին, ներս մուտքով թերթերին ու խնդրագրերներին յատկացւած մասնանում արձանագրելու համար (журналь ВХОДЯЩИХЪ БУМАГЪ):

Ժամը մէկ և կէսին ընդհատարաւորը խնդրագիրը ներկայացրեց գործավարին, իսկ վերջինս օրէնքի 1468 յօդուածի համաձայն ուղարկեց բուխյալատէր Ա. Աղ-ին ստիգնովկայ գրելու:

Բուխյալատէր Ա. Աղ-ն կատարելով, որ խնդրագիրը կրում է «ВЪ УПРАВУ» մակագիրը և ոչ թէ «ВЫДАТЬ» վերադարձրեց թուղթը գործավարին այս առթիւ որոշում (ПОСТАНОВЛЕНИЕ) կայացնելու համար:

Թուրքին և սաղօքիկ Աէրգէյին արձակեցին այդ օրը, առարկելով, թէ արդէն ժամը 2-ն է և, թէ գանձապահն այստեղ չէ:

Հետեւեալ օրը, մարտի 16-ին, առաւօտեան ժամը 6-ից դիւանատան դռան մօտ կանգնեցին Ազիզն ու քաղաքային այգու պահապանը: Ըստ սովորականի, ժամը 11-ին հաւաքեց ծառայողներին կօնտինգէնտը:

Այգեպանը նախ գիմեց գրագրներին, ապա գործավարին, գանձապահին, բուխյալատերին և ի վերջոյ վարչութեան անդամներին, ամեն մէկին կրկնելով իր խնդիրը:

—Թէ ի՞նչ դրութեան մէջ 30 կոպէկն ստանալու գործը:

Սրանցից ամեն մէկը իր հերթին պատասխանում էր, թէ այդքան չի կարելի շտապել և թէ գործը առաջ կնխանայ իր կարգով:

Գործավար Գ. Գ-ն ժամը 12-ին սկսեց գրել և 1-ին աւարտեց постановление-ն: Ժամը մէկ և կէսին հաւաքած վարչութեան նիստը ստորագրեց կայացած որոշումը մի քանի փոփոխութիւններով...

Թուղթը անմիջապէս ուղարկեց բաժանմունքը: Բայց սխալմամբ, փոխանակ առաջին բաժանմունքն ուղարկելու, զրոյց էր այն թղթերի մէջ, որոնք պատկանում էին II բաժանմունքին: Մինչ դեռ թուրքն ու հայը իրանց պահանջի թուղթը կորսնէին, յանկարծ II բաժանմունքի գործավար Չ. Ա. բարկացած ու կատաղած ներս ընկաւ I բաժ. գրասենեակը թուրքի խնդրագիրը ձեռին, ազդակելով, թէ ի՞նչ իրաւունքով I բաժ. թուղթը զրոյց է երկրորդի դօկումէնտներին մէջ:

Թուղթը յետ ստացւեց, անցկացրեց

«կայացումներին» համար որոշւած գրքի մէջ և նորից յանձնեց հաշւապահին ստիգնովկայ գրելու համար...


Ժամը արդէն 2-ն էր, հետեւապէս և շատ ուշ, նամանաւանդ, որ մէկ ժամ առաջ հեռացել էր ուղարկւածից պ. գանձապահը:

Հետեւեալ օրը, մարտի 17-ին, խեղճ թուրքն ու այգեպանը, արևածագից առաջ կանգնած էին վարչութեան փոռահեղ շինութեան պատերի տակ: Ժամը 11-ից անց հաւաքեցին ծառայողները: Հէնց այն վայրկեանին, երբ այգեպանը կամենում էր մշտնի վործավարի մօտ, որ բոլոր ծառայողներին ամենաբարին ու խելօքն էր, (բայց դուք, ընթերցող, չկարծէք թէ ես աւելորդ տեղն եմ յիշատակում գործավարի ամենաբարի և խելօք լինելը, որովհետեւ «հայ» հիմնարկութիւնների մէջ ծառայողներն առհասարակ խելօք և բարի չեն լինում), հէնց այդ րոպէին խեղճ այգեպանին իմաց տւին, որ իր բացակայութիւնից օգուելով, փողոցային սրկիաները արմատահան են արել ու փախցրել այգում նոր տնկած բոլոր պտղատու ծառերը... Այգեպանը շունչը կտրած վազեց դէպի այգին, իսկ թուրք Ազիզը երկար սպասելուց յոգնած քունը տարաւ ու քնեց վարչութեան շէնքի հարաւային պատի տակ:

Այդ օրը այգեպանը այլևս չվերադարձաւ. իսկ թուրքը երբ գարթնեց քնից, տեսաւ որ վարչութեան ատանի բոլոր դռները փակ են, և ոչ ոք չէր մնացել այնտեղ...

Ներեցէք, ընթերցող, որ ես, իմ անհողութեան պատճառով կորցրել եմ իմ օրագրի հետեւեալ մի քանի երեսները. ուստի և չեմ կարող ասել թէ թուրք Ազիզը երբ և ի՞նչ բարեխաղ պայմաններում ստացաւ իր ցախաւիլների գինը—30 կոպէկ:

Մարտի 16



ԲԱՆԱՆՆԻ.

—Աղա Գիւքի, խի՞ ես էդքան մտածում, որ քո կառավարչի նշանածը հալալ ծծկեր կաթկեր լինի. քեզ ինչ կայ որ...

Գիւքին.—Ինչ որ կայ, ինձ կայ. Աստուած ոչ անի եթէ օձի ճտի մէկը պատահի յետոյ...

—Աղա ախմախ, ուզում ա օձի, ուզում ա կարիճի ճտի մէկը լինի քեզ ի՞նչ, դու ծառայող մարդ ես...

—Հը՛մ, խիլքիդ կարասին մատաղ, հէնց ցաւը նրանումն է որ ծառայող մարդ եմ, և եթէ օձի ճտի մէկը լինի, աղիս ամեն օր պիտի չարացնի. աղէս էլ, ինչպէս ամենքը, ինձ ռասչօթ ա անելու, խօս խանութիս չի կարող սասչօթ անի, յետոյ քա ես չմտածեմ, էլ ո՞վ մտածի:

Մոն-սի

ԱԶԻԶ-ՄԱԶԻԶ ՄԱՐԳԱՐԻ

Նալայչի Մարգար ջան «Սաթարալա»-յին օխթը №-ին մէջ նամակում գրեր ես ինձի, ու կսիս. «Ջանըմ ատ վէր տէրտէրն է կնքեր քէզի օր անունդ ապպէս կասր-կտուր է էրիր»:

Գիտես Մարգար ջան, ինչպէս էր օր անունս Սորէն-ժան-դը-Բիւլ ին դրեր. դիւզ օր ըսինք՝ ես ալ չեմ հաւնիր աղ անունը հըմմա ինչ էնիմ ճար չկայ: Դէ անգաճ էրէ:

Էստուց երսուն-քստուց տարի առաջ իմ ծնողներ էղեր ին Ֆուսուգատան, ես ալ ծընւեր իմ Ֆուսուգատան: Ես օր ծնիմ կը հերս մնացեր ի շվար, ջանըմ ինչ էնի ինչ չէնի, օր տղան կնքի. հայ տէրտէր Աստուած տան, չի եղեր, է հերս էլ կուզէ օր անունս սալթ հայի անուն էզնի. չիւնքի շատ ազգասէր մարդ մըն է. է շատ օր փիքը կէնի կէրթա մէ ֆուսուգու տէրտէր կըճարէ օր աղան կնքի տան, է ի՞նչ էնի, թուրքը կըսէ իլլաջ եօխտու-խարաջօ: Աղ ֆուսուգու տէրտէրը ֆուսուգուարի կնքէ կը ինձի և անունս էլ կըզնի ժան-դը-Բիւլ:

է Մարգար ջան հիմի ալ կսիս հըրա Սորէնը ուստից դուս պրճաւ, դէ լսէ ըսիմ.

Ես օր երեք տարեկան կեղնիմ հերս կաւկազ պուքա, ու աստեղ ինձի թագադան հաշուարի կնքին կը ու անունս դնին կը Սորէն:

է Մարգար ջան հմի հասկցար թէ ինչի է անունս էղպէս ջարդ ու փշուր էղիր. մէնակ դուն չիս օր անունս չիս հաւնեք, Գասպար-աղէն էլ չի հաւնեք:

Դէ որ ապպէս է, ճեր երկունի խաթեր հըմար էստուց ետե սալթ ֆուսուգատանու անունս գրիմ կը. շտէ ես ալ օր չհաւնեք, պրաչէնի մը գրեցէք ու սուղը տէք:

Հն մօտացա ըսեմ...

Մարգար ջան, դուն գրեր իս օր Բագլից մամղիները նալօժ չենիմ, «քեզ ցէննի» պատիլկա էնիմ, է ես կուզէի օր մէ քանի շահ խէրիմ քեզանից ատ օգութն էլ չուզեցիմ, քու աղիք խաթէր հըմար «քեզ ցէննի» կէնիմ:

Քեզի գրկիմ կը մի գիւթին շալարաւոր մի գիւթին ալ, ան ոտքերը կապած նոր մօղայի մամղիներ, շուտ դալայէ ու հետ գրկէ:

Հն, նալօժ չենիս՝ տունս քանդիս, ինչպէս օր ես «քեզ ցէննի» կէնիմ, անպէս ալ դու էրէ: է՛, Մարգար ջան, շատ բան ունիմ գրելու, հըմմա քունս տանի կը.

Դէ, գիշէր բարի:

ժան-դը-Բիւլ



Չ Մ Ե Ռ

էլի ձմեռ, էլի ցո՛ւրտ, ձո՛ւն,
Մինչև երբ գայ, էտ աւեր տուն:
Անկոչ զոնազ պող-պող էկաւ՝
Պարխուլ տնակն անջախ գտաւ:

Ա՛խ, անասուած քեաֆիր ձմեռ,
Քանի տանջես, ան որդամեռ,
Քեզ սի կանչեսց, անտէր աշխարհ,
Չորար, նստար ողջ դաշտ ու սար:

Վճիտ երկիրք, պայծառ արև,
Չի տայ ողջոյն և ոչ բարև,
Չրենն է մօտիկ տանքի վրէն,
Հա կըթափէ գորշ ամպերէն:

Արծաթափայլ լուսին բոլոր,
Կերթայ բարձր ձամբէն մոլոր,
Արդեօք մեզնից է խոտված,
Թէ՛ աշխարհից համատարած:

Կարծր ստոած մեր հող ու բար,
Ու այգպէս է միշտ դարէ դար:
Տիեզերքը լայն ու անհուն է,
Թէ՛ օրէնք է՝ ամենուն է:

Ուրիշ տեղ էլ գաժան ձմեռ,
Վեր կըգնէ՞ իր ծանր բեռ,
Թէ՛ միայն մեզ է վիճակել,
Լողալ ձան մէջ ու գալարել:

Արեւ, լուսին, միշտ կան ու կան,
Լուսատու զարդ ողջ բնութեան:
Գիշեր-ցերեկ անձայր մէլոյան:
Ժպտուն կուգան՝ վշտոտ կերթան:

Ուրիշ տեղ էլ կանջ ջերմ ու լոյս,
Կտան պատշաճ և կեանք և յոյս:

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՅՈՅԹ ՍԻՐԵԼԻԳ ՄԵՐ «ԽՇԹԵՐԸԼԸ»

Լսեալ մեր, զի ոմանք ի նորաբողոք ե-
պիսկոպոսաց և գեղատեսիլ վարդապետաց
իշտանակալեալք վասն թափուր գահուոյն և
սևազգեցեալ աթոռոյն ս. Էջմիածնի, «տուռ-
նէ» կոչեցեալ շրջագայութիւնս կատարեն
և միտքարեն զվշտացեալ ժողովուրդս հա-
յոց, որք բնակին ի շքեղապերճ քաղաքս
Կովկասու, ի ցոյց բերելով շնորքն և գա-
մենայն զարժանաւորութիւնքն իւրեանց,
մեք ևս ոչ կամելով յետ մնալ զգրանցից և
յորդորեալ ի բարեկամաց, փութացաք Բա-
գու:

Բազմ, զինչ Բազու, Աստուած ծուխն զո-
րա ոչ մարեցէ... Մրաթաղեալ, փոշեկոլով
և նաւթաողող Բազու: յԱռաջին վայրկեան
թւայ մարդոյ, թէ Ղովտն սրբակեաց և իւր
զերկու համեմատափայլ զուսարքն նոր են

Թէ՛ մեզ համան մութն ու խաւար,
Դաժան ցրտին եղած աւար...

Սաստիկ ցուրտը և սասունը,
Հա նստել է որբի զեւրը:
Քամբախ արև, որբը բորիկ,
Մերկ ու չպլպոզ առանց զօտիկ:

Ու նա սաստիկ մրսում, սգում,
Լայն աշխարհում ձիւն ու բքում:
Արդեօք որբն է լոկ ցրտահար,
Թէ՛ մրսում է համայն աշխարհ:

Ցուրտը հանեց համ ու լազաթ,
Տարէ տարի գալիս է վատ:
Փալիս է վատ մեր հանդերին,
Պարտէզներին և արտերին:

Ու չորացուց ծիւր կանանչ,
Մրսան, կծկան աղջիկ ու մանչ,
Եարանք, մեր հողն է ամայի,
Թէ՛ կան ուրիշ տեղեր վայրի...

Մովսէս Ղուկասեանց



ՔՆԵՆՔԱՐԱՐ ԱՊԷՐ

Ես պապիցս եմ լսել, պապս էլ իր պա-
պից, իսկ պապիս պապն էլ սասանան գի-
տէ թէ որտեղից, որ մի գիւղում ապրում
էր մի մարդ, որի համար շարունակ մտած-
ման առարկայ էր դառնում իւրաքանչիւր
մի դէպք. լինէր այդ հասարակական թէ
անձնական, նշանաւոր թէ աննշան: Օրերով
նստում էր տանը, անհաց, անջուր, գիշեր-
ները քուն չէր լինում և շարունակ մտա-
ծում էր ու մտածում, թէ ինչպէս պատա-
հած դէպքին մի որևէ ելք գտնի:

Գուրս և կեալ այդ Սողոմ-Գոմորէն և անհ
թափի յերկնուց հուր և ձձումք, բուրէ
խանձահոտ և քանի մի վայրկեան ևս և
վառի ամենայն ինչ, թողլով ի տեղին աղի
լիճ մի՛ Մեռեալ ծով կոչեցեալ...

Անցանք մեք մրակուլով, ճշեալ ի տակ
բեռանցն, թշառ և սովալլուկ ժխորէն մշա-
կաց, ուրբուշի կոչեցեալք, որք թողլով
զսիրելի հայրենիքն իւրեանց և սիրակարօտ
մանկահասակ կողակիրքս զաչքն ձանապար-
հի, զձնողս և զաւակուներս կարօտով, վասն
կտոր մի չոր հաց ձեռք բերելու համար ա-
մենայն կողմանց Կաւկասոյ թափեալ են
աստ, ի նորակառոյց Սողոմ-Գոմորն Բա-
գու: Արդ՝ քնակարօտ աչքօք, սառնամանի-
քէն սրթարթացող ջանօք, զողողջիւն քայ-
լիւք, մրրկէն մղեալ ժխորիւք, երամ-երամ
խուժէին զէպ Կեղաքաղաքն(որ է Չորնի-
Գորոյ) և կամ Դժխաքաղաքն (որ է Բա-
լախանի), վասն վաճառելոյ անձինս իւ-
րեանց, զի ընտանիքն իւրեանց փրկեսցեն
ի սովամահէն: Աւաղ, քանիքն ի դոցանէ

Օրը միայն մի անգամ կողմին ջրի գալիս
գիւղամէջ, նոր դէպքեցիկ ջրանիկ լինել
թիւններ հաւաքելու:

Քիւղացիք նրա անունը շատ մտածելու
համար Քնենքարար (մտածող) էին դրել:

Մի երեկոյ կնոջ աղերսանքին լսելով՝
թողնում է մտածելը ու նստում է ընթրի-
քի: Կինը եփած փլաւը սինիով բերում է
դնում մարդու առաջ:

Ընթրիքի էն լաւ ժամանակը մէկը եր-
թիկից ձայն է տալիս:

—Քնենքարար ապէք, Քնենքարար ապէք,
բա չես ասել Մարտիրոսի էլը մի քուռակ
է ծնել առանց պոչի:

Քնենքարար ապէքը այդ լսելով փլաւով
սինին դէն է հրում ու դառնում կնոջը:

—Ստում ես քնեք մի անի, հաց կեր,
բա խեղճ քուռակը որ մեծանայ ու ցեւում
մնայ որտեղից պիտի բռնեն ու դիտից հա-
նեն:

ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԸ

Ուսուցիչ.—Այսպէս ուրեմն, մենք սովո-
րեցինք արդէն, ինչպէս գիտակաւնեւրն են
ապացուցանում, որ նախապատմական մար-
դը ունեցել է պոչ: Այժմ, դու, Քաղեսոս
կարող ես ասել, թէ պոչը նախապատմա-
կան մարդուն ինչ ծառայութիւն էր անում:

Աշակերտ.—Նախապատմական մարդու,
ցեխում թաղած միջոցին՝ պոչից բռնում
էին և հանում:

Չօրոսիլի.



յետ դառնան պարսպ, վիզքն ծուռ, գրպան-
քըն դատարկ և փորն անօթի...

Անցաք մեք քանի մի փողոցք և զտեսա-
րանն փոխեալք—բարձրաբերձ, գեղեցկա-
շէն, քարակուռ պալատք, շքեղազարդ, ձոխ
և թանգարժէք խանութք և վաճառատունք,
լայնարձակ և խճաւորեալ փողոցք, ուր
սրարշաւ սլանային հրեղէն երիվարօք լծեալ
Ֆայտօնս և աւտօմօբիլ կոչեալ նորահնար
կառս—ի միջին նստեալ ծոքքիթ և հինայա-
զուխ մաշաղիք, գրկեալ գնուրը իրանն շի-
կահեր գեղեցկուհի—յաւերժահարսից: Մինչ
մեք տղշեալ էաք շքեղութեանն և փարթա-
մութեան քաղաքիս, կտոքն մեր ընթանար
զմօտ ձեմեղատեղէն բուլվար կոչեցեալ:

Ո՛րպիսի ախորժալի և դուրեկան պատ-
կեր... Թւի մարդոյ, թէ գեղեցկուհեաց և
յաւերժահարսից ցուցահանդէս է կազմեալ:
Յամենայն կողմանց աշխարհի, յամենայն

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Փաստար դայի ջան, ես շատ վաղուցս- նիցս որ քեզ նամակ չեմ գրել. առաջինը ընդունիր անկեղծ բարեկերպ քեզ, քու օղ- լուշաղին և քու որդեկերանցը, երկրորդ, դա- յի ջան, խնդրում եմ որ այս յօդաձև էլ տպէք ձեր ազիզ «Խաթարալում»: Փաստար դայի, գորն ասեմ, կամ զորը խոստովան- ւեմ, ինչ գեղ որ առաջա գնում, էս մեր քամբախ գիւղը մազմանի աշակերտի դայ- գա օրէց օր յետա գնում: Ախր հմի լուսա- տոր դարի մէջ ենք ապրում. ինչու ա էս- պէս է... էս մեր աղսող՝ անկերը պտի լու- սաւոր պահեն էս մեր աղքատ խալխին, որ համ իրենց հօգիքն են ծախել, համ էլ Աս- տուածն են մոռացել:

Դայի ջան, հլա քօմայ դէնը կենա, բա էս մեր տեղի բանկը դասել ա ձմուայ կէ- ղակի բուն, ոչ փող կայ, ոչ փարայ. դրուստն ասենք կառուարիչն էլ ամեն բանի հետե- լում չի... ու փողն էլ ընենց մարթի չեն տալի, որ նարդի կամ թուղթ խաղալ դի- տենայ: Հմա են աղքատները մնում են էլի դէն կիկօն, էլի էն սովածը: Դայի ջան, ա- սում են Մանջուրըմը չումայ ա (ժանտախտ) լուս ընգել, բա որ էսքան անիրաւութիւնը մեր տեղումը կայ, էնայ չուման էլ կըգայ ու խօլերն էլ հետը, որ էս տեսակ անհոգի մարդկերանցը տանի, դժոխիկի բաժին անի:

Դայի ջան գահագով էդ բանը, չումայ ա ինչ ա, բերել տուր, քօ պատիւը իմ աչքի վերայ. համէլ մարկի ծախսի համար՝ մի մտածիր իսկի, չի էլած, էս մեր թագա պը- լան բացանող խալիֆէքը կտան, կամ թէ չէ Բօլօնց Սուքասը խոստանում ա տալ:

Քո եզան Ծնկլիի

ԳԻՐԳԵԿՆ ՄՕՏԻՆԵՐԻՑ

**

Արեւն անցաւ հովն քնկաւ,
Եարօ ջան.
Մութն ընկաւ, վախտն եկաւ
Սիրուն ջան.
Առջիբկունից ես էստեղ եմ—
Եարօ ջան:
Քարին կամնա՞ծ քեզ կապտեմ
Ազիզ ջան.

Ոչխարն եկաւ, գառն եկաւ՝
Ախ դու չեկար.
Իմ՝ աչքերս չուր կտրան,
Ու դու չեկար...

Պարզ երկնքում, տես, աստղեր
Պսպղացին,
Սարի գլխէն անուշ հովեր
Փչեցին...

Նկան առան էրում սրտիս,
Հով արին.
Վզովս ընկա՞ծ քեզի պէս
Ու դարդերս
Ժով արին...

Գիշերն անգաւ, վախտն անցաւ,
Ո՞ւր ես, եար.
Սիրտս սեւ... ու շատ լացաւ,
Ու դու չեկար...

Յակ. Տէրունի



զրկեալ եմք զվայելելու աշխարհային կեանք- քըն և վայելչութիւնքն... գայթակղալից է աստ կեանքն:

**

Գալով մեր առ Զաւէն սիրելի հայր- սուրբն և ողջագուրելով ընդ նա, պատրաս- տեցաք գնալ յեկեղեցի: Փառաւորեցաւ սիր- տըն մեր ջերմեռանդութենէն ժողովրդեանն, յորժամ տեսաք խուռներամ ժողովուրդն լցեալ յեկեղեցին և գաւիթն և փողոցքն շրջագայից նորա: Յետ պատարագին մեք ըստ աւուր պատշաճի քարող չխօսեցաք, բնաբան ունենալով «Երանի աղքատաց հոգ- ւով, զի նոցա է արքայութիւն երկնից»: Մեք դիտեցաք, թէ սրպէս մուշտակազարդ- գրպանատուզ աղայք ումանք, կարծելով պաշտպանեմք չքաւորաց և այդպիսով ար- ծարձեմ վաղուց թաղեալ սոսկալի կոչն «Պրօլէտարներ բոլոր երկրի՝ զմիացէք», խոժոռելով զղէմքն, դուրս երթային: Իսկ գրպանադատարկքն, քաղցած-թշուաքն խայ- տային և խնդային, երեակայելով, թէ ահա զրուներն արքայութեան բաց են և ինքեանք

ազգէ և ցիղզ գեղատեսիլ աղջկունք և հար- սունք և քրիվօք (որէ գորբեայրի կանայս) աստ են ժողովեալք և մոռացեալ վիշաքն աշխարհի, մոռացեալ աւուրքն Մեծի պահոց ապաշխարութեան, խայտան, քրքջան, կա- տակա ասնեն հաճոյախօս կօմպլիմենտիւք ընդ հաստափոր և հաստապլուխ, գոնեկա- տեա և տգեղակազմ կաւալիէրս: Բարբառին ամենայն լեղօք և ազգի-ազգի բարբառօք— համաշխարհաքաղաքացիութիւնն տիրապե- տէ աստանօր: Հապա «կանկի» կոչեալ զարճախաղն, որ գրգռէ տեսանելիքն մար- դոյ և զջանն դող բերիցէ և սիրտն թըրթ- ոացուցանէ: Ահա բազմազոյգ արու և էգ նորատիք, հագեալ ոտացն ձախարակաւոր անիւօք սանգալս, ամուր փաթաթեալ և դրկեալ գեղատեսիլ մարտիներ զմիմեանց, զանազան հաճոյատես շարժումօք, ալ էլ անհասկ խոտորելով, ձախրեն որպէս գու- նագեղ թիթեռնիկք և հասակաւորքն շրջա- պատեալ կրկէսն, ջրակալեալ բերանօք դի- տեն գայթակղալից շարժումքն մարմնոյ պատանեաց երկեսու և թաղին ի մէջ խոլ- մանց և հաճոյական մտածմանց... Աւանդ վարդապետացս, եղճեկ կուսակրօնացս, զի

ՅԻՄՈՅԵՅՐՈ ՅՈՅՊՈՒՄՈՅՅՅ



Ուսուցիչ.— Ով կարող է մի պարզ օրի- նակով բացատրել, թէ ինչ կընշանակէ «կատուն դուրս գնաց, մկները պար բը- նեցին»:

Աշակերտ.— Օրինակի համար, վար- ժապետ, դուք որ դուրս էք գնում, մենք չարութիւն ենք անում ու պար գալիս:

Զօրօգութիւ

Ընտրութիւն

Նէ.— Կարող եմ արդօք ես այսքան պերճու- թեան մէջ պարտաւոր և անբիծ կին մնալ...

Նա.— Ի հարկէ ոչ, իմ աղանիկ, ձեզ հարկաւոր է ընտրութիւն անել— կամ պատիւ, կամ պէքանք. երկուսից մէկը:

մտանեն վայելել զամենայն վայելչութիւնք, որք զլացեալ էին նոցա յաշխարհի, մտա- ծին մտօք սլացեալ, թէ սրպէս պէտք է քէֆ անեն և աշխարհային նեղութեանց վրէժն լուծեն: Պահ, պահ, պահ, թող մեծա- տունքն Արամեան, Մանթաշօլ, Արաֆելօլ, գան թամաշա առնել և տեսանեմք անդ կարծիք են բանացնել ազայութիւնն իւ- բեանց... Այսպիսի իլիզիւր-միլիւզիւրայօք զրաւեալ էին քաղցածափոր գրպանածակքն: Աստուած երազքն ի բարին կատարի, ա- մէն...

**

Յետ ս. պատարագին կայացաւ ծխական ժողով, վասն ընտրելու համար զհոգաբար- ձութիւն: Սիրտ մեր լցաւ վշտիւ և զարմա- նօք, յորժամ զտեսանք բազմահարիւր ժո- ղովորէն միայն չորս ջուխտ և զմի կէնա եկին մասնակցել ընտրութեանն և այն՝ թա- խանձանօք և մասամբ բոնադատեալ գե- ղատեսիլ և փառամիրութք Զաւէն հայր սուր- բէն: Ազգային մօնօպօլիսս գործիչքն մեր ցարդ ճգնէին ապացուցանել, թէ ժողովուր-

Ս Ե Կ Բ Ե Տ Ն Ի Պ Ը Բ Ը Ի Ա Կ Ի Բ

Զայս պեշատնի կիրս հրատնէ ի շտարն Ըրիւան, ի ձեռն պեր- վոյկլատանի մատտեր ըստանոյ իւրթըրալտտ, նորընձայ գու- նաչի, Փալանդուզ Միօին:

Մերս մարտի 18-ին

Կարօտալի ախպէր Միօ ջան!

Ա բալամ, քեզ հինչ եկաւ, հինչի բուջան եկիր վէր բիրդան վիննաւ կլխաւ իղթի բաղթի իլիր. վէր վէլ սասըթա կհամ վէլ խըբարըտ: Մին շախ կիրիցիր թա, գուու- նաչութունըմ սըւերըմ, չիւնքի «գուունա- չութունը մասլահաթ ա». եթա դօրթա պա խիչի գուունիտ սասը կեամ, թէ էլնա քեօհ- նա փեշակըթըս պընըցըմ խիչի 1911 թւի մօղէլնէն տիւս կեամ:

Ախէր մօղի մհար մեռած հոքի տուդ, խանըմնէն ու եօրթեօրթնէն մօղի ճը- նըպարէն սպասելաւ, օրեք հըմբրելաւ, ըշ- քընէն ճիւր կարից: Ախէր թագա տարէն ընցալա պարիկինթանըն էլ նհետը, շուտաւ էլ Զատիկն ա ընցնելու, նրանա հա էլ չըմբերցումն ա կեալու, պա ըտի կանին, պա մէշքը պերակ մալչուգան կաւալերի մհար մեռնուդ խանըմնէն ու հարուստ գա- լօղչի կուպեց փեսի մհար սպասող ըղջը- կերթը խեղճ չըն:

Պա ըտրանք ամեն տարէ քամակներին թըխելաւ էս պարիկինթանըս էլ գատըս նըր, էս Զատիկս էլ գատըս նըր, էս չըմ- բերցումըս էլ գատըս նըր. ըսկաւ, քանէ պարիկինթան Զատիկ ու չըմբերցում պըտի անցկացնին, վէր իւրանց մհար էլ մի:

լիւս ծաքի, օր ու արև տեսնան: Ընցած տարէ ևս քեզ մին պրակիրի կիրալ, վէր քու Փալանդուզխանան պրօթի մհար մին քանէ փալաննէ դրկիս. շատ շնրհակալըմ ատկազ չարիր՝ դրկեցիր. հա էլ հրկալի, բախչէիշ տեի մին քանէ ճընանչուած մարթ- կանց կնանուց ու ըղջըկերանց: Շատ ապրիս տեղաւէտ մին սուկէրս, սուկէ. Աստ- ւած կհանքըտ օրհնէ. համմա «էս—քաւ- թառի—էս—բարբշնեա — կօկետիկասի — է» փալաննէն շատըս ալիփրանգի կարըմ, էս- պէս վէր էշողի աշքերը շաղվըմա, հէնց ասըմըս օտեմ խըմեմ մուիկ տամ:

Մհինգ մեր շհարըմ 14—17 տըրեկան ը- բախերքը, հինչպէս ուուսն ա ասըմ մալ- Կուգան նէն սկըսալըն սիրահարել 20—25 տըրեկան ըղջըկերանց երան. դէ հկ էշը ցեխից հանէ. պա էն հասակն առած 25—35 տարեկան տղամարդիկը մինչև հիւր սպասին, թա 10—12 տըրեկան ըղջըկերթը կեան հասնին, վէր իրանք էլ պասակին, ա- խէր չէ վէր, սպասելաւ քեթառըմըն: Ուստա ջան. հթա կարըմըս դամըսկի փալանների պերօյ սօրթը, վըտարօյ շինիր, վէր էլաւ ըղջըկայ ու տղի տարիքը հաստար ինին: էն սովդին, վէր տիւ կիրալիր թա «ձեր քաւթառածնէն դրկեցէք, մեր հրեան, քեար- թու երիտասարթներէն տանք, իսկ մեր փալաննէն դրկինք ձեր Մերեն սըղացնե- լու». ես հըմբձայն չըմ, չիւնքի քիւ ալի- փրանգի փալաննէն լոթի երեսը պրզացը- նըմա: Միօ ջան. մին սեկրետըմ կիրըմ, քեարգևաներիս փալանդուզխանան տիւս ըրա, հանա տապ ըրած կարթի: Հն էնի ասըմ, ընցած օրը ըրզարաւը ընցնելիս, տեսի վէր մին ջահիլ տղայ ու մին աղջիկ՝ շատ սիրաւ քիսի փիսի ըն անըմ, ու խը- բեկ ա մընըմ վէր աղջիկը լոք տայ տղի

օտերը եր ինի: Հըտարըրջիցի մտազի գե- սի, վէր էրկուսն էլ քու փարթիկի փայլա- ներանըն կեցած, տղան Անբարոյականի- դը-Լեուածի-է. Աղջիկը՝ Յանցատի-դը-տիւս պըծածի-է: էա նօվամօղնի փալաննէն հմ բախչէիշ տաւծներան չի, հինչպէս ըրեմա քու փալանդուզխանանըն պիրիլ տաւ: Տղան ձեռքը շատ էր տանըմ տըպի ըղջըկայ մէշ- քը սրտէս մի պեան ա ալան ինըի, չինի թա էա ըղջըկայ փալանը էն փալանը ինի վէրը քու քեարգեհանը հանդլիշ ինիլաւ, ծախալա վեց արասաւ, մէշնի թագքըմ, քու հայոց ազգի մհար պահած հոգապահուց 700 մանէթը ու 24 շահին: էս ու էն ասը- մըն քի սիրահարաւըմըն, համմա իտի գատ չկան: Տղան՝ լոթին կրթիլաւ «Սըթըրալի» մէշ քու արլավենիտ, կլխիա ընկալ վէր էտ փալանի մէշ եղ կայ. մհինգ սօ- ված շան պէս, ըղջըկայ չորք կողմաւը շուտոււմ շուտոււմ անըմ, վէր հինչա թա թովըմիշ անէ ու փալանին մէշի փողերին տիրանայ. լիաւ արագա, Ասուած պարին կըտարէ, ձեաը ըրազում միշտ կորեկ կը- տեսնայ: Ըտրանց ագրեսը տօշպա տօշ կի- ըրմըմ, կարողըս տայնի պալիցի միջոցաւ, սըրսկուստ անիս, պեհի էութունը իմա- նաս: Աւալա ագրեսը էսա՝ Мервъ городъ уголь тратуаръ домъ Польш-Бутылка № 14.

Ուստա ջան, եթա ինձ լսիս գուունաչու- թուն սեղելը կըթողնիս, ու քեօհնա փե- շակը կըպընըցնիս, չիւնքի գուունաչութու- նան խեք չըմ տեսնալ, ըտրանան սուայ «գըրխ եաշնուայ օրգեանան ախրաստալ չալսը»:

Թա օղըմըս վէր մարթ տեսնաս ու սօ- ված չմնաս, հկ տիւ միւր Մերըմ, ու Աս- խարադըմ, մին մին աղեկէննի պեաց, մին փարա մարթկանց մհար չեշիդ փալաննէ

դըն հայոց գլուսաւորեալ է, արհամարհէ կրօնն և նախապաշարմունք նորա, և եթէ գան եկեղեցի՝ վասն դպրոցաց է և այլն, արդ՝ յետ ժամասացութեան. յորժամ տնօ- բինի բախտ դպրոցաց և հազարաւոր ան- մեղ մանկանց, ընդէր փախուստ տայ ժո- դովուրդն անտարբեր: Օլ հեան եղիցին ջուխտ մի տեսուչքն ազգային դպրոցի, որ գահան- ջէն իւրեանց չորս տասնեակ ուսուցչաց բանելով, բերին յեկեղեցի և լրացուցին օ- բիտական թիւ ծխականաց, որով ժողովն ճանաչի զվաւերակօսն:

* *

Կայացաւ ժողովն. Աստուած ընդունելի արօսցէ: Աս ի չգոյէ կօլօլիկ զբամազլիսոց, բազումք հրաժարէին անձինս իւրեանց ըն- տրելի տանել, քանզի «ուր գէշը իցին — անը ժողովնացին արծուքը... Մէյբանն մնացեալ էր չխսէլ-ջուհուլաց». և մեք գոհ եմք, զի բազում արդիւնս աննին, քան ճարպակա- լեալքն, որք տիւ և գիշեր խորին միմիայն վասն լեցուցման երկաթեայ մեծ զկասաս- յին իւրեանց: Անգէտ ժողովականքն առ ի

չգոյէ խելքի՝ ոչ զվերընտրեցին երկու յոյժ եւանդուն գործիչս, զսիրելին մեր Արամ Առաքելեան և Մ. Բալայեան: Ճակատն ընտ- րողաց քեօռամեխ պիտոյ է գարկել: Բա- լայեան ոչ է ընտրեալ, քանզի ժողովական- քըն շփոթեալ են գնա զհետ նոյնամտան ազգանւան, որ զբաղի պարեկոյթս կազմե- լով. իսկ Արամն Առաքելեան վասն սակաւ քէլից՝ թեցաւ ի շարս կանդիտասաց, սա- կայն ի զայրոյթ բըթեալ, հրաժարեցաւ մե- ծարարբառ: Շատ լաւ արիաց և աշքն հեան տխմար ընտրողաց:

* *

Տարօրիրակ երևոյթ սառն-անտարբերու- թեան ժողովրդեանն զէւլ դպրոցս, բազումք պատճառաբանեն նովաւ, զի միապաղաղ կեանք դպրոցաց ոչ ոգևորէ ժողովրդեան, ուստի և երևան թիքեալէ զնորանից: Ու- սուցիչքն ի վերալ ըրաձութեան կոչմանն իւրեանց և տեսուչքն զերկու, Հովեան և Զառաֆեան, թէև երկուքն ևս բարձրագոյն կրթութեամբ օժտեալ և ներկայացուցիչք տարբեր ուզողութեանց, սակայն զմբզակուի

նչ կազմեն, ոչ քաշքշին դմազինքս գլխոյն միմեանց և ոչ թոյլատրեն ուսուցչաց զեր- կուց իմբաց բոնցամարտիլ կամ վարժու- հեաց՝ անհրաժայն ծեւուցիւ չանգոտել զի- ըրալ երեսքն: Եւ ժողովուրդն հայոց Բագ- լայ, որ զազգային իմն նախանձախնդրու- թեամբ յոյժ սիրէ այդպիսի տեսարանք— որպէս սիրէ նաև ի կրկեսի ցերկին ըմբիշ արանց և Ֆրանսուհեաց գօտեմարտումն, — արդ՝ զըւի խաղաղ կենցաղէն և լուս գոր- ծունէութիւնէն մանկավարժական խմբաց և այդ է պատկառ անտարբերութեան ժողո- վրդեան զէպ ազգային հիմարկուլիւնքն:

* *

Այսմ ժամու լսայ, զի բազմաստորագիր աղերսագրօք՝ տիկնայք, օրիորդք և քրիւօք դիմեալ են առ Սինօդն, զի գեղատեսիլն Զաւէն ոչ փոխադրեն ի Ղարաբաղ, քանզի նա է միսթարիչն և հոգացող ամենայն կարիքներաց նոցա և այլ ոք ոչ կարէ փո- խարխել զնա, ամէն:

Ճեղրիկ Արեգայ

Կլիմապաշտպանություն—ինքն

Անհրաժեշտ արտադրանքներ
— Գրու՜ք ձեր հոգևոր և արտաքին կյանքի խնամքը




ՕՏԱՐ ԻԿՐՕՐ



Ինքնապաշտպանության մեջ պետք է ընդգրկել համապատասխան հագուստի և սպորտաթղթերի օգտագործումը։ Կլիմապաշտպանության մեջ պետք է ընդգրկել համապատասխան հագուստի և սպորտաթղթերի օգտագործումը։

Ինքնապաշտպանության մեջ պետք է ընդգրկել համապատասխան հագուստի և սպորտաթղթերի օգտագործումը։

Հ Ա Պ Ի Կ Ի Մ Ո Ս Ս Ո Ւ Մ Ե Կ Ե Գ Ե Կ



պահէ, ու գահագնէ ունդունու, եթէ գարար անիս ես տամ. իլաք թա էն թագա տիւս եկած դամակի շաւարներան ինի, մուշտատարիքը կլօխա կոխ կըտան:

Ստուգենակի փալաննէն էլ խոզըմը ու մօզըմընա, էտ դէյիմով էլ ամեն տեղ մարթ կարողա պատիւ յարմար ծնենալ: Տիկիննէն ու եօրթեօրթնէն կակըսն հըտաքքըրուել ու սիրահարել... Հեռան տեսած տեղը խորը ան կըքաշին ու ասին խնդճ տղայ պասիգնի կուրսըմընա իլալ համամ փող չի իլալ վէր ըւարդէ, մհինգ տիւսա եկալ դաղարգիւն ընկալ, օզըմա վէր վրժապիտութունաւ, ետ չէ մին օրիշ քիալագեաւ, փող ըշխատէ վէր թագազան քինա ըւարդէ, պայց հեսա հինգ տարէ ա թաթը կոթին չի հըսցնըմ:

Ընաչնիւրըմ սղուղենակի էնար կենըմ, վերըվեր հըմըլտըանըմ դօխտորութուն, ետ չէ ինչնեբութուն ար սըւերմ, համամ մհինգ սապօմիկնէն էլ քիչա մնացալ վէր ստուղենտ տեռնան: Պաւականա վէր հըմըլտըանի քղաքի, քիւչի եաչէ զըրիտօրի ա նըմը գիտաս, նրա ետ ազատ ըրաւունք ծնիս ստուղենտ տընալի:

Ատեղենի պեացելուց մի քանի գիւծին ստուղենտակի փալաննէ կըպիլիս: Մին օրիշ փանդ էլ կան բիրդան հըրը: նալի. եթա խօսք տաս, վէր կըմիջնորթիս արին իըթարալայական Մեծութուն Ք. սապար աղին ինձ մին պատուաւոր պաշտօն տալի, փանդը կասիմ, եթա չէ, եսալ չէ:

Մին խօսքաւ, շատ մարթի աչք ա ձնապարի, շեղ վէր ինիս երկինքըմ, թա երկիրըմ, մին ձէն ըրա, ըու ձէնին ի ք կարօտ:

Բեզ կարօտող Գալա ա



Տիրուհի եւ սղախին

—Եթէ ես, տիկին, ձեր գլխարկի նստա մի գլխարկ ունենայի. հրդեհաշէջների ամբողջ մերթի կըխեղազարեցնէի:

—Ի՛նչ, ինձ բուական է մենակ հոյ քանց պարագլուխը:



№ 2 „Ք Ա Մ Ի“ № 2

Գրական, հրատարակական, քաղաքային և գիւղական լոթիբրագական կուլտուրական, թայֆական և հայհոյական, դնքասական և այլն և այլն «ական» թերթ, որը լոյս կը տեսնի երկու շաբաթը մի անգամ, հղորագոյն «Պաթարալա»-ի ոսկէտաւ էջերում:

Թերթիս աշխատակցելու են Գեօզալ-Աղաբաշի, (պէտ և պըզէւողիտէլ համայն կովկասի հայ և օտարազգի սուֆրա-ժիւտակաների), Փիստոն Ճլթեան, (օրդինատոր և

արէնդատոր հնագոյն—Նախիջևանի նորագոյն համալսարանի), Փալանդուզ Մկօ, (միակ պատրաստողը՝ ժամանակակից սպգային գործիչների անհրաժեշտ գարգ-փալանի) և այլ յայտնի և անյայտ, կենդանի, մեռնելու պատրաստած և արդէն մեռած գրականագէտները:

Մեր դէպիցն է—գնալ դէպի այն կողմը ուր քամին կըտանի: Սա այժմ մեր մասնուում ամենաընդունւած և յարգւած ուղղութիւն է, ուստի մենք էլ հետ մնալ չենք ուզում:

Ա Ռ Ա Չ Ն Ո Ր Պ Ո Ղ

Բազու. — Այսօր և այս տարի:

Կաթողիկոսական ընտ. մօտենում են: Մենք էլ ենք մօտենում: Բայց որովհետեւ մեր ջէքը աւելի մօտ է, քան կաթողիկ. հարցը, մենք էլ նախ մօտենում ենք մեր ջէքին ու էնտէղից ինչ, «Քամի» որ փչի նոյնն ուղղութեամբ էլ մենք կըգնանք: Թէ՛ «Քամին» ումն է առաջարկում, երբ է՛ առաջարկում, ինչո՞ւ է առաջանկում, ոնց է՛ առաջարկում, — կըխօսէք յայտորդ անգամ:

ՓԷԼԻԷՏՕՆ

ՄՏՔԵՐ Կ ԸՆԱՆՑ ՄԱՍԻՆ

1) Ինչքան որ կինը ամուր է կաշում տկամարդուն, նոյնքան շուտ է կորցնում իր հաւասարակշռութիւնը:

2) Միայն նա կատի կնոջը, ով սրտանց սիրել է:

3) — Լսիր, Անն. — հարևանուհիդ քանթ տարեկան է:

— Գրողը տանի, — ինչքան մեծանում է, բայց 20 տարեկանից չի անցնում:

ԵՍ—ԴՈՒ

Ես սիրեցի—գու էլ սիրեցիր, Ես հաւատացի—գու խաբեցիր. Ես շրբեր առի—գու հաբեցիր Ու երբ ամեն ինչ դըրստեցիր՝ Վերցրիր—սիրէկնիդ տունը քաշեցիր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղիս հայ ինտելիգենտների մի սոււար խումբ՝ հիմնել է գրական-գիտական-գեղարվեստական-խելքից հեռուական և այլն «ական» մի ընկեր. «Փուչ» անուանով: Մօտ օրերս կըկարդացեն մի շարք դասախօսութիւններ՝ «Թղթախաղի բարեազդեցիկ դերը մեր կեանքում», «ուսել և քնելը», «նարգիի և լօտօյի դերը եւրոպական աշխարհի և մեր խելքի վրայ» և այլն նման կարգինալ հարցերի շուրջը:

Տեղս հասաւ Արէլեան — Արմէնեան գերաս. խումբը: Այդ պատճառով պանրի և սոխի գինը խնդոյն թանկացաւ: Առ այժմ թատրոն սիրով և խմբերով յաճախում են

կոնտրամարկա և ձրի տոյնիկի մէջէջ անցնելը: Անցեալ օրը մի քանի քանդակագործներ ուզել էին ներս մտնել, բայց վախեցել էին՝ որ մասխարա չգցեն ու «հետադիմական» չանւանեն իրանց ու ամաչելով հետ էին փախել:

Տեղիս գանձակեցի օրիորդներին՝ բուրիս խուզարկեցին. ամենքի էլ ԿՄԽԱ-ների մէջ գտնւել է պահպանեցով փամփուշտներ, բայց յետոյ քիմիական հետազօտութիւնը հաստատել է, որ դրանք... պապիրոսներ են եղած:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին-Սախիջևան. — Տեղիս՝ լոյսա-մթաց-նող-ղու-գուրական՝ «բամբասանք» ընկ.-ը չկարողանալով այս տարի ես՝ իր «լուսաւոր» գաղափարները դպրոցի դռներից ներս խոթել, երէկ գիշեր դպրոցի հետևից մի թօժոկից զարթնում է աւաղ ուսուցիչը և բուլբարի միակ լապտերի սիւնը տեղահան անելով՝ վրայ է հասնում: Օգնութեան են գալի մնացած ուս.-ուսուցչուհիները ևս և կարճատև պատերազմից յետոյ թշնամին ետ է նահանջում: Հարձակողները թողել են մի սպանւած, որի սվ լինելը՝ կարմիր արնոտ երես ունենալու պատճառով առայժմ չի խմացել: Ուսուցչուհիներից վիրաւորել են՝ Շմաւոնի հաստ փօրը, ուսուցչուհիներից մէկի շիտպան և Աննի գերկան:

3. Գ. Նոր իմացայ, որ հարձակողների շարքում տեսել են մի հաստավիզ աէրաէր ևս:

Ազգ-ը

ՊՈՍՏԱՐԿԸ

Եթերում. պ. Բաժանորդեանին: Էհ, ներիր, աղբէր ջան, ախար Բագուն ինչով էր պակաս Տփիսից, որ ինքը ևս հայ «խրմբագիրներ» չտար: Մէկ էլ որ, նոքա պարագութիւնից էր՝ վեր էին կացել և «խրմբագիր» դարձել: Դու բաժանորդագինը մոռացիր, նոքա էլ խօսք են տալիս՝ մէկ էլ էա... չանեն. խմբագիր—հայոց—հրատարակի՛ Բագրի «Պաթարալիստների» լիզեր՝ Կլաս Գալովը

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Բ Ժ Ի Ը Կ ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփականը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ՄԱՐԿԱԿ

Կոմպոզիցիաներ

- Շ Ք Ե Ղ Կ Ա Ա Մ Ո Վ
- 1906 թ. 5 ռ.
- 1907 թ. 7 ռ.
- 1908 թ. 7 ռ.
- 1909 թ. 7 ռ.
- 1910 թ. 7 ռ.

Հին համարները հատով թիֆլիսում
10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ.:
Դիմել՝ «Սաթաբալա»-ի գրասենեակին:

Բ Ժ Ի Շ Կ

Ե. Ի. Միևսեսևից

Ներքին և երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:
Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—83

Композиция

Тифлисть. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Носитсяяне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.


по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣль и впрочѣе.

Имѣется также галантерейный Отдѣлъ

00—36 М. А. КАЛТАКЯНЦЪ



Յանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիքով և հոգով ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ զեկտեմբերի 1-ից հրատարակոււմ է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՐԶԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ռ., կէս տարւանը 6 ռ. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետևեալ գներով.

»ՍՈՒՐԶԱՆԴԱԿ« եւ »ԽԱԹԱԲԱԼԱ« միասին
Տարեկան 12 ռ. ☉ Երեք ամիսը 4 ռ. — կ.
Կէս տարին 7 ռ. ☉ Ամիսը 1 ռ. 50 կ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакция „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ՊԱՏՐԱՄԻ ՍՊՈՏԵԿԵՂԷՆԻ ԽՆՆՈՒԹ ԿԻՐՇԵՆՈՒՄԻ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

Գոլովինսկի պրոսպ. տ. 2ուբալովի

ՍԵՂՈՆԻ Զ Ա Մ Ա Ր ՍՏԱՑԻԱԾ

ԵՆ մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—ուսական և արտա-
ուսման եան ֆարրիկաներից: Բոլոր ապրանքները ձեռք են բերւած
առաջին ձեռքից և նշանակաւ են Շ Ա Ց Է Փ Ա Ն Գ Ն Ե Ր

Օտար քաղաքների պահանջները կատարոււմ են

Հ Ո Ւ Տ Ա Փ Ո Յ Թ Ե Ի Ճ Հ Տ Օ Ր Է Ն 00—6

ԹԻՓԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՆ ԴԻՐՔՈՎ
ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՐԵՆԱՆԵՐ
Խ Ր Օ Մ Օ - Լ Ի Տ Օ Գ Ր Ե Փ Ի Ե

Ա. Ի. ԲԻԹՈՎԻ

(ԵՐԵՅՆԻ ԵՆՑ ԱՏԱ)

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Օբոյեանի, տելեֆոն № 433.

Յայտնոււմ է ի գիտութիւն պ. պ. պատւէր աւուղների, որ վիմագրա-
տունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չա-
փով ընդարձակեց և աւելացաւ նոր կօնսուրուկցիայի և ամենամեծ
զիրբի արագատիպ մեքենայով իր բոլոր օժանդակիչ պարագաներով:
Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատւէրները կա-
տարել շուտ, ճշտութեամբ եւ Ա. Ի. Բ. Ի. Ե. Ֆ. Ա. միւս վիմագրատներից:
ցանկանալով վիմագրական գործը կովկասում հասցնել իր արժանի
բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ
ժամանակակից տեխնիկային: Յոյս ունիմ, որ պ. պ. պատւէր
աւուղները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերև յիշածներս և
կըպատեն ինձ իրենց պատւէրներով, իսկ ես իմ կողմից ամեն
չանք գործ կըզնեմ բաւարարելու պահանջները:

00—26

Յարգանքներով—Ա. Ի. ԲԻԹՈՎ

ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ ЖИВОПИСЦЕВА въ г. Орль.

ԾԱՂԿԻ ՂՐԹՈՒԿ. Դեարեթի սրակը՝ 50
մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ.
Խալ-վակի մէջ—5 մարդու համար—5 կոպ.:
Մի բուրբոց պակաս—չէ վաճառոււմ: Ճանա-
պարճածախի համար—30 կոպ.: Երեք բուր-
բոց աւելի ուղղին համապատասխան
զեղջ մինչև 20 տոկոս, հասցէն. Օրեթի քա-
ղաք, Ծաղկի շորթուկ ժիլպոլիցի:





ՀԱՅԵՐԵՆԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆ



Մոստ.